

ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԻՐԱԶԻ ՊՈԵՄՆԵՐՈՒՄ
(ԴԱՆԹԵԱԿԱՆ, ԲԻԲԼԻԱԿԱՆ, ՀԱՅՈՑ ՀՐԱՇԶԸ, ՍԻԱՍԱՆԹՈ
ԵՎ ԽՁԵԶԱՐԵ, ԱՆԻ)

Մեզմից յուրաքանչյուրը ոգեշնչվել է շիրազյան անգուգական բանաստեղծություններով ու պոեմներով: Դա մի անկրկնելի ու անգնահատելի աշխարհ է, ուր միախառնված են ոգեղենն ու բանականը, ուր հանգրվանված են Շիրազ - բանաստեղծի մտքի սլացքն ու հոգու հեքը: Իսկ այդ ներդաշնակությունն ստեղծվում է բառերի ընտրության շնորհիվ: Հանճարներին է վայել միայն իրենց բազմաշնորհ տաղանդի միջոցով ոչ միայն օգտվել մայրենի լեզվի բառապաշարի թաքստոցներից, կենդանություն տալ դրանց, այլև ստեղծել իրենք: Շիրազը ևս հետևել է ժամանակակից հայերենի համար սահմաններ չճանաչող բառաստեղծման օրենքին: Հայոց լեզվի բառապաշարի հարստացման ակունքներից են ածանցումն ու բառաբարդումը, որոնց մատչելիությունն ու ճկունությունը Շիրազին ևս հնարավորություն է տվել կերտել բառեր, որոնք ամբողջապես արտահայտում են բանաստեղծի ստեղծած պատկերի հուզականությունը: Դրանք բառեր են, որոնք համահունչ են հեղինակի անհատականությանը, ինքնատիպ մտածելակերպին, որոնք մի ամբողջ պատմություն են իրենց մեջ ամփոփում: Օրինակ „Դանթեականում“, անդրադառնալով հայ ժողովրդի արյունոտ էջերից մեկին՝ հեղինակի բանաստեղծական երևակայությունը ստեղծում է երկրային դժոխքը արտացոլող բառեր, որոնք ավելի խոսում, կենդանի, իրական գույներով են արտահայտում Շիրազի խորը վիշտը՝ արցունքաբաշակ, եղեռնադժոխք, դերզորվել, գառնաբառաչ, գարհուրատեսիլ, մահաքառս, մեղսածով, լացահուր, իսլամաքոքիջ, կմախքակռիվ, ոճրակիտվել և այլն, բառեր, որոնք ցույց պիտի տալին իր դժոխսխտոց ու սևաթավիշ սիրտը:

Նորաբանությունները աչքի են ընկնում իրենց նրբերանգային առանձնահատկություններով: Բանաստեղծը մշակել է հայերենի հարուստ ու բազմաբնույթ բառազանձից օգտվելու ուրույն եղանակ ու ձևեր: Նրա ստեղծած նորաբանությունները բառ-պատկերներ են, ընտրված բառարմատներ երևույթի

խոր ընկալման զգացում են առաջացնում: Հեղինակը ստեղծում է հիմնականում իսկական բարոյություններ՝ / դրանք կազմում են նորաբանությունների մոտ 90 տոկոսը / ազգախաչ, այբբենաթուր, բելասպան, գաղտնաեղեռն, դանթեալուռ, եղեռնափոս, զորագործ, ինքնահունցվել և այլն:

Շիրազյան նորաբանություններն ունեն յուրահատուկ կառուցվածք: Այդ բառերը ըստ կազմության կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ պարզ բառեր, ածանցավոր բառեր, բարդ բառեր / դրանք հիմնականում իսկական բարոյություններ են / և բարդ ածանցավոր բառեր: Պարզ բառերի մեջ մի առանձին խումբ են կազմում գոյականներից կազմված պարզ բայերը, որոնք դիպվածային բառեր են: Օրինակ՝ աշունել, բուրգել, գյուտել, եղեռնել, հարեմել, շատրվանել, կուրել, վեմել, ոտել: և / Ածանցավոր բառեր: Շիրազը կազմում է ածանցավոր նոր բառեր, որոնք ևս բնութագրում են հեղինակի լեզվամտածողությունը և խոսքի ոճավորման ինքնատիպությունը: Դրանք բառեր են, որոնցում ձևի և բովանդակության ներդաշնակությունը պայմանավորում են պատկերի ստեղծման անփոխարինելիությունը: Ածանցավոր բառերը կազմվել են բացառապես գոյականներից բայ կերտելու ճանապարհով: Ամենից հաճախական կիրառություն ունի կրավորականի -վ ածանցը: Օրինակ՝ աբելվել, անդրանիկվել, ակունքվել, դերգորվել, դժոխքվել, ենիչարվել, զորքվել, թագվել, կայենվել, կոմիտասվել, հրաբուխվել, հեթանոսվել, սֆինքսվել և այլն:

Այս բայաշարքի մեջ սակավ թիվ են կազմում այն բայաձևերը, որոնք կազմված են ածականներից: Օրինակ՝ անճարվել, վայրագվել, մենակվել և այլն: Ածանցավոր այս բայերը ևս բնորոշ են միայն շիրազյան ոճին և դարձյալ դիպվածային բառեր են:

Հայ ժողովրդի համազգային ողբերգության հանդեպ այլազգիների քար անտարբերության պատկերն է մարմնավորվել հետևյալ տողերում՝

Ազգեր ինչով եք դեռ քրիստոնյա...

Բայց սֆինքսվեցիք՝ լուրջամբ դժնյա,

Երբ քրիստոնյա հայ ազգն էր խաչվում / Դ /:

Պատկերի էությունն ու գաղափարը արտահայտվել է մեկ բառի մեջ՝ սֆինքսվել: Եվ կամ՝ ...Ցածում՝ խաչքար էր Մասիսն էլ ինքը՝

Այս բանաստեղծական տողում աճում գոյականի առարկայական իմաստը վերածվել է ընթացական գործողություն արտահայտող իմաստի:

Ածանցավոր բառերի շարքում կան այնպիսիները, որոնք հեղինակը կազմել է պատկերավոր խոսքի ստեղծման նպատակադրմամբ: Դրանք տարբեր ածանցներով կազմված նորաբանություններ են: Օրինակ՝ ազգավոր, անսպեղան, անգթալ, անհանգել, անկիսելի, ամայստան, աստվածարար, գերանգութ դժոխարար, դժոխունի, եղկին, եղծանի, ընկրկանք, ծաղկատ, համասպանդ, հյուսիսուհի, ոճրարար, պատժանք, պեղանք, քարայրենի և այլն:

բ/ Բարդ ածանցավոր բառերը համեմատաբար քիչ են: Օրինակ՝ բյուրագանգյա, խորերկրյա, խորհրդալուին, դիակուտակ, ցեղասպանք, գայլամարդուկ՝ մեղսամասունք, միմոսախնդում, մահալուիկ, հողմնածնունդ, մերկամուրիկ, հուշախորհրդավոր և այլն:

գ/ Շիրազյան նորաբանությունները հիմնականում երկբաղադրիչ իսկական բարդություններ են: Օրինակ՝ աքիլեսավրեժ - աքիլես - ա - վրեժ, աստղանեկտար - աստղ - ա - նեկտար, խենթակուրծք - խենթ - ա - կուրծք և այլն: Իսկական բարդությունների հիմնական առանձնահատկությունն այն է, որ իմաստաբանական տեսակետից բարդության ամբողջական, ընդհանուր իմաստը բաղադրիչների մեխանիկական գումար չէ, այլ ավելի լայն ու նորացված: Եվ բարդության մեջ առաջին բաղադրիչը հանդես է գալիս որպես երկրորդի լրացում: Այս դեպքում կարելի է խոսել բարդության բաղադրիչների՝ բաղադրական հիմքերի մասին, որոնցից առաջինը՝ լրացումը, լեզվաբանների մի մասը համարում է սերող հիմք, իսկ երկրորդը՝ լրացյալը, բաղադրող հիմք¹ Նորաբանությունների մեջ իսկական բարդության բաղադրիչների ազատ իմաստը վերածվում է կախյալ իմաստի: Օրինակ՝ կարապնակուրծք չի նշանակում կարապ և կուրծք, այլ՝ կարապի սպիտակության նման ճերմակ կուրծք: Մասնակի դեպքերում միայն իսկական բարդության նոր,

¹ Աղայան Եր. Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե, 1984, էջ 247:

ընդհանրական իմաստը կարելի է բխեցնել բաղադրիչների իմաստից: Այդ դեպքում առկա է բաղադրիչների համադասական հարաբերություններ; Օրինակ՝ ողբերգ - ողբ և երգ, շաքարաղանդ - շաքար և աղանդ, մահադամբան-մահ և դամբան, կայծալույս /կայծ և լույս / , անդնդավիհ/ անդունդ և վիհ /;

Շիրազի պոեմներում նորաբանություն - իսկական բարդությունները արտահայտվել են բառակազմական հետևյալ կաղապարներով.

ա/ գոյական - գոյական՝ ազգահայր, ազգամայր, ազգախաչ, այբբենաթուր, առասպելածով, արնակզակ, զանգագոգ, գինեգետ, դժոխաբույր, եղեռնադաշտ, եղևկանուշ, իսլամասյուն, լեզվաբախ, լեզվածով, խաչանտառ, ծաղկացեղ, հայաբույն, հիսուսազեն, հուսավիշտ, ձկնածով, մահախամ, մահիկնաճակատ, մարմնասյուն, մոխրաբարուր, նեռազասիրալույս, վեղարասուզ, վրիժաբոց, ուղեղախյուս և այլն;

բ/ Գոյական - ածական՝ այգեճոխ, զանգալուռ, դժոխավայրագ, հիսուսահեզ, մահիկնանեղ, մարմնամերկ, ցեղաժանտ, փրփրանուրբ և այլն;

գ / Գոյական - բայ՝ առյուծացույց, արհավրատես, եղեռնասաստ, հայաթուրծ, հայրենախաս, մանկաքան, մասիսատես, շիրմաշարծ, պառաճասախեղդ և այլն;

դ / թվական - գոյական՝ յոթնամանուկ, յոթնադժոխք, յոթնավանք, յոթնացավ, հազարանշխար, հազարաշիրիմ, հազարաքարվան, հազարապատանք և այլն;

Մնացած կաղապարներով մեկ կամ երկու օրինակ են կազմված: Օրինակ՝ բայ- գոյական՝ հոգնախիղճ, հոգնափրփուր, գոյական - կապ՝ մասիսաչափ, ճամփամոտ, դերանուն - բայ՝ ինքնահունցվել, ինքնամոռ, ածական- ածական՝ հավերժադալար, մոլախև, մակբայ- ածական՝ մշտանոր, մակբայ - գոյական՝ մշտախարույկ , հավերժասուզ և այլն:

Բարդությունների մեջ, որպես երկրորդ բաղադրիչ, հանդես են եկել հիմնականում գոյականը, բայը, ածականը; Իսկական բարդության կազմությանը, ինչպես օրինակներն են ցույց տալիս, մասնակցել է նաև երկրորդ ձևով՝ հանդես գալով բարդության սկզբում և կատարելով լրացման դեր: Բայ գերադաս անդամին լրացրել է հիմնականում գոյականը;

Բարդությունների կաղապարներում սկզբնաբաղադրիչը, մասամբ էլ վերջնաբաղադրիչը, գործածված են հնչյունափոխված տարբերակով: Օրինակ՝

արմակզակ - արյուն / յու - օ /, արհավրատես - արհավիրք / ի-ը/, հուսածոմ - հույս / ույ - ու/, մոխրաբարուր - մոխիր /ի-ը /
մշտամրմունջ - միշտ / ի-ը/, սիրածոմ - սեր /ե-ի/, խնկախոս - խուճկ / ու-ը/ և այլն;

Մի շարք գրաբարյան արմատների -ք հոգնակերտը, որը ժամանակակից հայերենում կորցրել է իր հոգնակիության իմաստը, բառակազմության ժամանակ անկում է ապրել: Օրինակ՝ դժոխսխուց, դժոխսխավար, դժոխաքարոն, զորագորք և այլն; Մեղք սկզբնաբաղադրիչով բարդությունների մեջ կա գործածության մեկ տարբերակ՝ մեղս / գրաբարի հոգնակի հայցականի ձևերը/; Օրինակ՝ մեղսադժոխք, մեղսաթաղ, մեղսահոծ, մեղսակեր և այլն; Երբեմն հադիպում են գրաբարյան քարացած ձևեր՝ աստեղարծիվ, աստեղնացունց, աստեղաբարծունջ;

Ամեն դերանունը լեզվի պատմական զարգացման ընթացքում վերածվել է ածականի գերադրական աստիճանը կազմող նախածանցի; Սակայն չիրազյան նորաբանությունների մեջ ամենա ածանցը գործածվել է գոյականների հետ՝ ամենակույս, ամենասար ձեռք բերելով բառային նոր արժեք:

Նորաբանությունները, ինչպես նշեցինք, հիմնականում իսկական բարդություններն են, որոնց բաղադրիչները միմյանց միացված են կամ հողակապով / դրանք մեծամասնություն են կազմում /մոտ 90/, օրինակ՝ ազգախաչ, աստղաոգի, արևահայ, բյուզանդախոս, գաղտնաբոց, հեռաթափառ, մարդականթեղ, մահաթնջուկ և այլն, կամ առանց հողակապի՝ անգոթև, գայլընկեր, շաքարաղանդ, վտարանդ, լուռընթաց, քաջընկեց;

Որոշ բառերի մեջ հողակապը հնչյունափոխված է գործածվում՝ ի արմատական վերջնահնչյունի հետ առաջացնելով ե ձայնավորը / ի-ա -ե/; Օրինակ՝ այգեճուխ, գինեխենթ, գինեմշուշ, ոգեզորք, ոգեհույս, ոգեհույլ;

Այժմ քննենք, թե նշված կաղապարներից յուրաքանչյուն ինչ խոսքի մաս է կազմում;

ա/ գոյական -գոյական կաղապարով կազմվել են՝

1/ գոյականներ՝ ազգահայր, ազգամայր, աստղանկտար, եղեռնադաշտ, ազգավաչ, արթունահայ, երկնափիրուզ, լեզվաբահ, լեզվածով, լեզվազորք, լեզվաեղջյուր, ծաղկածով, հանճարալույս, շաքարաղանդ;

2/ ածականներ՝ ալլահաքըքիջ, անգղթև, այբբենաթուր, արնակզակ, արիլավրեժ, գահաթուրք, գինեխիդ, գինեմշուշ, երախտահուշ, լեզվաժխոր, կարապնավանք, հայազեն, հուսամրմունջ, մահակնճիռ, մարմնաձյուն, ճեռազարհուր, սիրալույս, վեղարասուգ, ուրվախոհ և այլն;

բ/ Ածական - գոյական կաղապարով կազմվել են՝

1/ գոյականներ՝ գաղտնաեղեռն, թխավարդ, պղծաճակատ, վայրենավագր, արթունահայ / ... դու իմ միակ արթունահայ, 33 /;

2/ ածականներ՝ մերկուղեղ, խենթակուրծք, իմաստազորք, նորաթագ, ոսկեթաղ, գաղտնաբոց, դժնաթրթիռ, զարհուրաբիր, ապշաբերամ;

գ/ գոյական - ածական կաղապարով կազմվել են միայն ածականներ՝ գանգալուռ, գանգամութ, դժոխավայրագ, հիսուսահեզ, մահիկնանեղ, փրփրանուրբ և այլն;

դ/ թվական - գոյական կաղապարով կազմվել են միայն ածականներ՝ յոթնադժոխք, յոթնավանք, յոթնացավ, յոթնահող, հազարանշխար, հազարաշիրիմ, հազարաքարավան և այլն;

ե/ գոյական - բայ կաղապարով կազմվել են՝

1/ գոյականներ՝ եղեռնասատ / ԴԴ 43/ հարսնառ; / Բայց հարսնառի ժխորի մեջ.../; մեղսատենչ / Նոր մեղսատենչով թուխսի է նստել Մասիսից այն կողմ, ԴԴ 261/, հուսածառս /Մի հուսածառս՝ զոկված իր մի ողջ անհույս անտառից, ԴԴ 251/;

2/ ածականներ / որոնք մեծամասնություն են կազմում/ ազգապահ, առյուծացույց, աստղացիր, արհավրատես, արքունատար, աստեղնացունց, ասորախոս, եղեռնասատ, երկնամատույց, հայաթուրծ, հայրենամոռնչ, մահահաս, մանկաքամ, մեղսակեր, վրեժավառ և այլն;

զ/ բայ- գոյական կաղապարով կազմվել են ածականներ՝ հոգնախիղճ, հոգնափրփուր;

է/ ածական -ածական կաղապարով բացառապես ածական խոսքի մասն է կազմվել՝ ամայաշվար, մոլախև, պղծամեծ ,պղծալուռ;

ը/ դերանուն - գոյական կաղապարով կազմվել են ածականներ՝ ամենակույս, ամենասար;

Ինչպես օրինակներն են ցույց տալիս, նորաբանությունների մեջ իսկական բարոյությունները աչքի են ընկնում կաղապարների բազմազանությամբ, խոսքամասային բազմաբնույթ կազմությամբ:

Այժմ անդրադառնանք բարոյությունների ներքին կառուցվածքին, բաղադրիչների արտահայտած շարահյուսական հարաբերություններին, իսկ այդ հարաբերությունները, ինչպես նկատել է Մ.Աբեղյանը, սովորաբար „ստորադասական է. մասերից առաջինն ըստ իմաստի լինում է լրացում երկրորդի, այսինքն՝ բարդ բառի գլխավոր նշանակությունը երկրորդ մասի մեջ է, առաջինը միայն որևէ կողմից որոշում, լրացնում է երկրորդի իմաստը²...:

.Այն բարոյությունները, որոնց գերադաս անդամը գոյականով է արտահայտվել, ունեն բաղադրիչների այնպիսի հարաբերություններ, որոնք հատուկ են գոյականական բառակապակցություններին, այսինքն՝ գոյական գերադաս անդամին ստորադասված խոսքի մասերը հիմնականում արտահայտում են շարահյուսական երկու՝ հատկացուցիչ – հատկացյալի և որոշիչ- որոշյալի հարաբերություն:

ա/ գոյական-գոյական կաղապարով կազմված գոյականներ, որոնք արտահայտում են հատկացուցիչ – հատկացյալի հարաբերություն: Օրինակ՝ աստվածամարմին / աստծո մարմին /, աստղահուր / աստղերի հուր /, աքիլլավրեժ / աքիլլեսի վրեժ /, գառնածայն / գառն ծայն /, զինեզետ / զինու զետ/, դժոխաբույր դժոխքի բույր /, եղեռնավայր / եղեռնի վայր /, խաչանտառ / խաչերի անտառ /, հիսուսամահ / հիսուսի մահ /, սիրաճրագ / սիրո ճրագ /, օջախաքար / օջախի քար /:

բ/ գոյական- գոյական կաղապարով կազմված բարոյություններում որոշիչ- որոշյալ հարաբերություն արտահայտող բառերը ավելի սակավ են՝ դժոխաբույր /դժոխային բույր /, արնալաց / արյունալի լաց/, զանգալեռ զանգերից պատրաստված լեռ/կաթնակուրծք / կաթնային կուրծք/, կանացազգեստ /կանացի զգեստ /, ծյունահյուսիս/ ծյունոտ հյուսիս /, ղուրամահայ / ղուրանը դավանող հայ /, անտունահայ / անտունի – որբ հայ /, վշտահուշ / վշտոտ հուշ/,

² Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե, 1965, էջ 201:

մոխրամատուռ / մոխրի վերածված մատուռ /, մեղրագազպե / մեղրի նման գազպե/;

Մնացած կաղապարներով կազմված բարդություններում բաղադրիչներն արտահայտում են որոշիչ- որոշյալի հարաբերություն՝

գ/ ածական - գոյական կաղապարով կազմված գոյականներ, որոնք արտահայտում են որոշիչ- որոշյալի հարաբերություն՝ արթունահայ / արթուն հայ/,

գաղտնաբոց / գաղտնի բոց /, դժնա թրթիռ/ , ապշաբերան / ապուշի նման բերանը բաց /, նորաթագ / նոր թագ կրող/, պղծանդեռն / պիղծ եղեռն /, վայրենավազր / վայրենի վազր , վշտագույժ, լերկագանգ, ծանրալանջ;

դ/ գոյական - ածական կաղապարով կազմված բարդություններում գերադաս անդամ -ածականի բառային իմաստի թելադրանքով գոյական լրացումը տարբեր հոլովածներով է դրված; Օրինակ՝ այգեճոխ / այգիներով ճոխ / , գանգալուռ / գանգի նման լուռ /, գինեխենք / գինուց խենթացած/ , դանթեալուռ/ դանթի նման լուռ /, հյուսքասև / սև հյուսք ունեցող /, մահիկնանել / մահիկի նման նել /, մարմնամերկ / մերկ մարմնի նման / , ցեղաժանտ / ժանտ ցեղ /, փրփրանուրբ / փրփուրի նման նուրբ /;

ե/ թվական - գոյական կաղապարով կազմվածները՝ յոթնադժոխք, յոթնավանք / յոթնախումբ, յոթնանահայ, յոթնացավ, հազարապատանք ;

զ/ մակբայ - ածական կաղապարով կազմվածները՝ մշտամուռ / ինչպիսի /, մշտանոր, ;

ը/ մակբայ - գոյական՝ մշտախարույկ / ինչպիսի / , մշտաբուժ, մշտաբոք;

Բայ գերադաս անդամ ունեցող կաղապարներում ուսումնասիրությունից պարզվեց, որ բաղադրիչների միջև կան խնդրային, պարագայական, ենթակայական հարաբերություններ;

1/ Գոյական - բայ կաղապարի բաղադրիչներն արտահայտում են խնդրային հարաբերություններ.

ա/ ուղիղ խնդրային հարաբերություն; Օրինակ՝ ազգապահ / ասզը պահող /, արհավրատես / արհավիրք տեսնող /, աստղացիր / աստղ ցրող /, աստղացունց / աստղը ցնցող /, աստվածակիր / աստծուն կրող /, արքունատար արքունիք

տանող /, բելասապան բելին սպանող/ , պանդխտատար / պանդխտ տանող /, մանկաքամ / մանուկին քամող/, մասիսատես / Մասիսը տեսնող /;

բ/ Տրական հոլովով դրված անուղղակի խնդրի հարաբերություն; Օրինակ՝ հայացունց / հայերին ցնցող /, մահահաս / մահին հասնող /, մուրազահաս / մուրազին հասած /, սփամահաս / Սրփանին հասնող /;

գ/ Գործիական հոլովով դրված միջոցի անուղղակի խնդրի հարաբերություն վրեժավառ / վրեժով վառված /, հիսուսազեն / հիսուսով զինված/, հայահոծ/ հայերով խիտ, շատ /, խնկախոս / խնկով խոսող /:

Գոյական - բայ կաղապարով բարդությունների բաղադրիչներն արտահայտում են նաև պարագայական հարաբերություններ; Օրինակ՝ ազգախոսիկ / ազգի նման խոսող /, առյուծացույց / առյուծի նման ցույց տվող/, ասորախոս / ասորերեն խոսող , ինչպես /, բյուզանդախոս, դանթեակուռ / դանթեի նման կուռ , ամուր /, սերմնամեռ / սերմի նման մեռնող /, ոսկեթաղ / ոսկու մեջ թաղված /, հայրենամուտ / հայրենիք մտնելը /, հայահաչ / հայի նման հաչող /, շնահանգել շան նման հանգել , ինչպես /, կարապնասահ / կարապի նման սահող/;

Բարդությունների բաղադրիչները արտահայտում են նաև ենթակայի հարաբերություն; Օրինակ՝ եղեռնասաստ / եղեռնը սաստելը/, շիրմաշարժ /շիրիմը շարժելը/, հայկակերտ / Հայկի կերտած , կողմնակի ենթակա/;

Թվական - գոյական կամ մակբայ բաղադրիչները արտահայտում են պարագայական նշանակություն; Օրինակ՝ յոթնադժոխք, յոթնակողմ, յոթնաձոր, յոթնամեղա, յոթնավանք, յոթնացավ / ինչքան / , հազարակտուց, հազարաթուր;

Գոյական -ածական, ածական-ածական, ածական -գոյական բաղադրիչները ևս արտահայտում են պարագայական իմաստ; Օրինակ՝ այգեճոխ, պաշահառաչ, զանգալուռ, զինեխենթ, դանթեալուռ, դժնաթրթիռ, դժոխավայրագ, լուսնադժույն, մուլխև, պղծամեծ, ցեղաժանտ և այլն;

Նորաբանությունների ոճական նշանակությունը Շիրազի պոեմներում

Շիրազի պոեմների նորաբանությունների լեզվական քննությունը հանգեցնում է նաև նրանց ոճական ուսումնասիրությանը, ,, քանի որ ամեն մի գրող որքան ինքնատիպ է իր մտածողությամբ ու լեզվով, նույնքան և

անհատական է իր ոճով, որով էլ հենց ամենից առաջ տարբերվում է մյուսներից³...:

Շիրազի պոեմներում նորաբանությունները առանձնանում են իրենց ոճական յուրօրինակությամբ, որը պայմանավորված է բանաստեղծի ինքնատիպ մտածելակերպով: Բանաստեղծի անսպառ երևակայությունը ծնունդ է տվել այնպիսի բառերի, որոնք նպաստել են նկարագրված պատկերների տեսանելի և շոշափելի դառնալուն: Շիրազը բառապաշարում եղած բառերի մեջ փորձել է գտնել մինչև իր ժամանակները անհայտ իմաստներ ու նրբերանգներ: Դա արվում է բառերի անսպասելի համատեղմամբ, անսովոր կապակցություններով և դրանց՝ նույն այնքան անսպասելի գործադրմամբ: Շիրազյան նորակազմությունները համալրել են հայերենի բառամթերքը, թեպետ դեռևս բառարաններում արձանագրված չեն: Գրողի ստեղծած նորաբանությունները աչքի են ընկնում իրենց դիպուկությամբ, խորիմաստությամբ, պատկերավորությամբ: „Դանթեականում,, հայոց թախծն ու վիշտն ընդգծելու համար Շիրազը պոեմում սփռել է բառեր, որոնք ամբողջական գաղափար են տալիս այդ երկի բովանդակության մասին: Օրինակ՝ եղեռն, դժոխք, գանգ, մահ, մեղք արմատներով կազմված են բառեր՝ գանգալեռ, գանգագոգ, դժոխախաձայր, դժոխաքեն, եղեռնադաշտ, եղեռնախուժ, մահաշանթ, մահաշուրջառ, մահաքառս, մեղսաշար, մեղսահեղձ, մեղսակնճիռ և այլն, որոնք ընթերցողի հոգում կատարվածի խոր ընկալման զգացում են ծնում: Կարծեք Շիրազը Դանթեի նկարագրած դժոխքի պատկերներին հակադրում է հայ Դանթեականը, որը սրտախոց հիշողություն է, այլ ոչ թե երևակայության արդյունք: Դժոխք արմատով կազմված բարդ բառերում այդ բառը որոշակի երանգավորում է ստանում դանթեադժոխք, դժոխահառաչ, դժոխաշրթունք, դժոխաքեն, դժոխանվագ և այլն:

Ախ, վայ, թե տեսնես ինչ պիտի տեսնենք,

Երբ լոթնադժոխք Դեր-Ձորներն հասնենք...

Եվ այս մողոքի դժոխաքառոն հետքերը բռնած... /Դ/

³ Լ.Կ.Եգեկյան, Գրական աշխարհաբարը և արևելահայ պատմավեպի լեզուն, Եր., 1990, էջ 269:

եղեռն բառը հալածել ու խենթացրել է Շիրազին իր ողջ կյանքի ընթացքում, և նա ստեղծում է բառեր, որոնց արտահայտած իմաստները հրկիզում են ընթերցողին եղեռնաճամփա, եղեռնաձայն, եղեռնահար, եղեռնաղետ, եղեռնաձոր, եղեռնասպի եղեռնասուզ, եղեռնասասան և այլն;

Դարեր անիծեն եղեռնասաստիս վրիժաբոցով նզովեն նոցա...

Ու ելանք վանքի ցրտից չարագույժ,

Որ գնանք Դեր- Ջորն այն եղեռնախուժ.../Դ/

Մոխիո արմատով կազմված ինքնատիպ բառերում մոխրագույն երանգով պատկերը դառնում է նույնքան մռայլ ու չարագույժ: Օրինակ՝ մոխրաթախիծ, մոխրափլված, մոխրամիտք, մոխրափրփուր, մոխրածով:

Ո՛ր երբ դուրս եկանք մենք ղանթաուռ

Մեր դեմ հայտնվեց մի մոխրամատուռ,

Մատուռ դառած մոխրատուռուշան .../ ԴԴ 93/

Ո՛ր մոխրագուռուհ մենք Պոլիս հասանք...

Սեդր բառով կառույցները ևս ինքնատիպ են. բանաստեղծը չափանիշներ է փնտրում մեղսագործին և մեղքը բնորոշելու համար. Այդ բառերից են՝ մեղսաթուրք, մեղսահոծ, մեղսակեր, մեղսաթաղ, մեղսահեղծ և այլն;

Ինչ ունի հայր մեղսափառիզում,-

Մոռացանք միթե մեղքը ֆռանգի.../ԴԴ 20/

Գալիս են հետքով մեղսաթուրքի

Փնտրելու համար մարմիններն իրենց;/ ԶԴ 40 /;

Բառերի իմաստները շահում են նաև այլ արմատական բառերի գործածությամբ՝ ազգ՝ ազգահայր, ազգախաչ, ազգախոսիկ, ազգամասունք, ազգաբերդ, ազգահառաչ և այլն; Բյուր՝ բյուրալեռ, բյուրագանգ, բյուրահալ, բյուրանդունդ, բյուրավերք; Մահ՝ մահաշանթ, մահաքառս, մահահամ, մահաթնջուկ, մահահրաքուխ, մահամուլոր, մահաչյա; Հավերժ՝ հավերժավառիկ, հավերժանիշ, հավերժահայ, հավերժարև ; Ընթաց՝ ծեծընթաց, ուղտընթաց, լուռընթաց; Հազար՝ հազարաշիրիմ, հազարապահեստ, հազարադժոխք, հազարաթուր, հազարաբերդ, հազարաթարթիչ, հազարավայ և այլն;

Շիրազն ստեղծում է բառեր նաև, որոնք իրենց մեջ հակադրություն են պարունակում՝ պոռնկանեկտար.

Խաչեց մեր հույսը ու պոռնկանեկտար

Խարզիլեց դրկեց սուլթան ու խանին.../ՀԴ 35 /

Տեսնում ենք, որ բանաստեղծական խոսքում յուրաքանչյուր նոր բառ խորապես պատճառաբանված է իմաստային առումով: Եվ նոր բառն էլ այնպես է ծուլվում պատկերին, որ հնարավոր չէ այն ընկալել առանց այդ մի բառի:

Շիրազի ստեղծագործությունների համար Մամիսը եղել է ներշնչանքի աղբյուր, և իր սերն ու կարոտը արտահայտելու նպատակով նա գործածում է ամենա բառով կազմություններ՝ ամենասար, ամենալեռ:

Գրողի համար մեծ արժեք է ստացելաստվածաշնչյան բովանդակություն ունեցող քվանշանների գործածությունը՝ յոթնադոխք, յոթնացավ, յոթնամանուկ, յոթնահայ, յոթնամեղա յոթնավանք և այլն:

„Սիամանթո և Խջեզարե „ պոեմում Շիրազի անսպառ երևակայությունը ստեղծել է բառեր, որոնք կարողացողի հոգում ծնում են գեղեցիկը գնահատելու անզուսպ ցանկություն: Սառմին բառը շունչ է առնում բանաստեղծի գրչի տակ, և դու տեսնում ես , թե ինչպես են կարապնակուրծք աղջիկները ծովը մտնում մերկացած... Ծովը մտան ...փրփուր-փրփուր, տեսիլներով մառմնածև...

...Երազում էլ տեսած լիներ, բայց չէր տեսել մառմնամեռն.

Այն էլ վանքի սուրբ կույսերին...

Յուլ բառը բարդությունների մեջ ռճական նոր երանգ է ստանում և նպաստում է խոսքի պատկերավորմանը:

Խոսում էիր Աստօն հետ հուսամոմունք ու սրտաշուրթ...

...Մերթ նետի պես հուսաթռչ, մերթ աղեղի պես կորվելով... / ՀԴ/:

Շիրազի խորին համոզմամբ հայ ժողովուրդը չկորավ դարերի մշուշի մեջ, քանզի „Պարակուտախ աղետների մոխրի մեջ էլ անթեղվելով,, ապավինեց հայոց գրին: Եվ չի ծուլվի հայը ազգերի մեջ, քանի դեռ լեզուն եղջյուր ունի,, լեզվաեղջյուր պիտի ցուլվի, հավերժ պիտի խոյահարե...,, /ՀԴ/

Բանաստեղծը երազում է այն բարի օրվա մասին, երբ այլևս չեն լինի իրանահայ, թուրանահայ, այլ հայը կլինի միայն հայրենահայ:

Այս, երբ պիտի ազգահավաքն հային դարձնի հաւոնճախաւ.

Որ աստղացիր ողջ հայերին խմբե առևախաւ ԳԳ:

Այս երկու տողում բանաստեղծը իր յուրօրինակ հնարանքով ստեղծում է բառեր, որոնք ավելի խորն են ընդգծում Շիրազ-գրողի ապրումները աշխարհացիր հայ ժողովրդի ճակատագրի մասին:

„Հայոց հրաշքը՝ Մեսրոպ Մաշտոց,, պոեմում նոր թափ է առնում շիրազյան գրիչը. ստեղծվում են բառեր, որոնք ներդաշնակ են և գրողի հայրենասեր ոգուն, և Մեսրոպ Մաշտոցի եղախտահուշ հիշատակին:

Հաճախ Շիրազը գործածում է բառարմատներ, որոնք տարբեր բարդությունների մեջ գործածվելով՝ տարբեր նրբերանգներ են ստեղծում խոսքում: Օրինակ՝ զոռք – իմաստագործ, լեզվագործ, գորագործ, ԳԳ / ծով – երկնածով, /Սխ/, լեզվածով /Դ/, ճաղկածով, մայրածով /Սխ/:

Պետք է նշել, որ Շիրազի պոեմները առանձնանում են նաև մակդիրների հմուտ ու ճաշակով գործադրմամբ: Հայտնի է, որ մակդիրները, հատկապես այն մակդիրները, որոնք հեղինակային նորաբանություններ են, ծառայում են խոսքին զգացմունքային լիցք հաղորդելուն: Նրա պոեմներում հաճախական կիրառություն ունեն ածականական /զահատուլ/ հրաման, աստվածառաւ ծով, մշտանուծ մեղք/ և դերբայական ձևերը /դեղձողված մահ-ճամբար, եղեռնված ազգ, նռնած գիրք, մատուցված ածու, շիռմաշառժվոռ ռաշտ/, որոնք մեծամասամբ բարդ կառույցներ են: Շիրազը վարպետորեն է կիրառել մակդիրները՝ բացահայտելու տվյալ իրավիճակի մեջ բնորոշն ու կարևորագույնը: Մակդիրների միջոցով հեղինակին հաջողվել է ավելի խորն ու հուզալից արտահայտել իր մտորումներն ու խոհերը: Գրողը չի ստեղծում սովորական, ավանդական մակդիրներ, այլ ստեղծում է նորաբանություն-մակդիրներ, որոնցով հեղեղում է իր պոեմները / հատկապես Դանթեականը / : Բառերի մակդրային արժեքը պայմանավորված է նրանց արտահայտած թեմատիկ նշանակությամբ: Այսպես՝ սիրո գաղափարի պաշտպան բանաստեղծը „Սիամանթո և Խջեզարե,, պոեմում կերտել է մակդիրներ, որոնք նրա գեղագիտական ճաշակն են ընդգծում միաժամանակ: Օրինակ՝ մառնածուն օրահարս, կառաանկուծք աղջիկներ, փոփոհնուղ մարմին, թխավառ թշեր ; Կորցրած հայրենիքի կարոտն արտահայտում է այնպիսի

մակդիրների միջոցով, ինչպիսիք են՝ հավերժահայ Սիփան, ծաղկածով Սիփան, առոնասաւել Սասիս, բյուրաւեռ Յայաստան, կայծակնազօշ Սասուն և այլն; „Հայոց Հրաշքը“, պոեմում հեղինակը մակդիրներ է շռայլել Մեսրոպ Մաշտոցին՝ հայ ազգին հավերժ հայ պահողին, մեծարելու համար; Քանզի օտարը այն դաժան օրերում ուզում էր „հային ծուլել չորս լեզվի մեջ մահաթնցուկ„ / 230 ՀՀ/; Սակայն „երեսունվեց որդի ծնեց ... կույս երկունքով..“ իր հանճարի անմահության կնիքը դնելով „մահակնծիռ“ ճակտին հայոց „; եվ հայ ժողովուրդը , ապավինելով հայոց գրերին, դառակուտակ աղետների մեջ չկորցրեց իր ինքնությունը; Մակդիրների գործածությունը բանաստեղծի կողմից արվել է շատ ճաշակով ու նպատակասլաց;

„Ղանթեականում,, նյութի բովանդակությունն ու մեկնաբանությունը Շիրազի կողմից ներկայացվում է բանաստեղծական անսպասելի պատկերների ստեղծմամբ; Նկարագրված պատկերներն այնքան հուզիչ են ու կենդանի, որ ընթերցողը կարծես դառնում է ակամատեսը այդ ամենի; Ինքնամոռաց, կլանված նկարագրվածով՝ հեղինակը ստեղծում է նորաբանություն-մակդիրներ, որոնք իրենց բացառիկ գործածությամբ, նրբերանգային առանձնահատկություններով բացահայտում են հայոց մեծ եղեռնի սարսափը: Աստվածային դժոխքը տեղափոխվել էր Հայաստան աշխարհ; Նման դժոխք Ղանթեն նույնիսկ չէր տեսել, քանզի ինչ-որ չէր տեսել իր նկարագրած դժոխքում, տեսնում է այստեղ. „Ինչ-որ չէր տեսել Աստծո դժոխքում, Մարդկային վշտի ձևերը պես-պես , Ձառիուտատեսի ու քստմնամեծ.../ Դ, 14 / ; Իսկ այդ դժոխքը նկարագրելու համար Շիրազը ստեղծում է բառեր, որոնց միջոցով հեղինակը հասնում է խոսքի կատարելության ու պատկերավորության; Ինչպես՝ սիրահառաչ; հայ, ժայռաշրթունք աշխարհ, գառիուտաբիւ աչքեր, եղեռնադժոխք անդունդ, մահաշուքառ անապատ, մանկամահ մեղք, արհավրափշտ հայ, մեղսադժոխք աշխարհ, հիսուսաժեն ազգ, բուռազանգաւ մահեր, մթնուղեղ խաժամուժ, գոջախեւ թուրք, ահեռատեսի հորդա, մեղսածնունդ ոսոխ, մահախոնջ աչք, պիառած երկինք, հավերժասուռ երկիր, մշտանըուժ մեղք և այլն;

Շիրազյան նորաբանություն –մակդիրները իրենց մեջ պարունակում են նաև համեմատություն՝չնայած չկա համեմատության եզր;

Օրինակ, թափառավայ արշավել – թափառական, վաչկատուն ցեղերի նման արշավել / Չայոց պապերն են ծեր թափառավայ արշավել, ... ու այս հողը կնքել սելջուկ անունով / Դ 234 /; Գառնաբառայ զռալ /, գառան բառաչի նման զռալ /, ուռվաթալ երթ / ուրվականի նման քայլող երթ /, հիսուսահաս ընկրկանք / Չիսուսի նման խաչվելով ընկրկել /, դեղնադագաղ անապատ / դեղին գույնի դագաղի նման / , մառմնաձյուն ջրահարս / ձյան նման սպիտակ մարմին / , փրփրանուրբ մարմին / փրփուրի նման նուրբ / և այլն;

Փոխաբերական իմաստ են արտահայտում հետևյալ մակդիրները՝ մեռնուռեն մազադաթ /ԲԳ/, մահակնճիռ ճակատ / ԳԳ /, այլբենաթուռ զորավար, /ԲԳ/, սորոնկանեկտառ նարգիլե /Դ/, աստոռապեռ Շիրակացի /Դ/, ծլունած Դոմեր /Դ/, չիռնաշառժովող դաշտ /Դ/, ախառած երկինք /Դ/, մահակնճիռ եղեռնադաշտ /Դ/, ուռվախոռ ոգի, /Դ/, առիաժառտես լուսին /Դ/, ոժոխաշառթունք լռություն /Դ/ և այլն;

Մի քանի խոսք մակդիրների կիրառության մասին; Շիրազի պոեմներում մակդիրները գործածված են հիմնականում գոյականների հետ՝ իբրև գեղարվեստական որոշիչ լրացում; Ինչպես՝ պանդխտատաղ ճամփա, աստոռագիղ հայեր, սիռահառաչ հայ, մահաթնջուկ մղձավանջ, դանթեռաժոխս ճամփա, հիսուսագեն ազգ, գոջախելք թուրք և այլն; Սակայն շիրազյան մադիրների մեջ առանձնակի կիրառություն ունեն պարագայական մակդիրները; Բայերի հետ կիրառելով՝ հեղինակը նպատակ է ունեցել ավելի խորն ընդգծել գործողության էությունը; Օրինակ՝ դանթեռալուռ դուրս գալ, ապաշահառաչ մոլորվել, փախչել գառնաբառաչ, լեզվաեռօլուռ ցուլվել, աստոռագիղ փշրվել, գինեմաուռ երգել, մահասոսալի սրսփալ, մահաշանթ խուժել, շահակամ լռել և այլն;

Ինչպես տեսնում ենք, Շիրազի ստեղծած նորաբանություն-մակդիրները անկրկնելի են և համահունչ են բանաստեղծի հոգուն; Նա ինքնամոռաց նվիրումով, աստվածատուր երևակայությամբ թղթին հանձնեց տարիներ շարունակ իրեն մտատանջող թեման՝ հայոց եղեռնը և եղեռն-երևույթին գնահատում չստանալը; Չայ ազգի նկատմամբ մարդկության նման բուժ անտարբերությունը զրոգին ստիպեց դառնալ իր ազգի իրավունքների քատագովը, դառնալ ազգապահպանության խոսափողը, ազգային

ինքնագիտակցության ռաիվիրան; Եվ նա իր պոեմներում նկարագրեց պատկերներ, որոնք վերարտադրում են բանաստեղծի դժոխախոց սրտի մորմոքը:

Շիրազի պոեմների մորաբանությունները իրենց բազմաբնույթ կառուցվածքով և ոճական առանձնահատկություններով մեր կարծիքով կմնան որպես հեղինակային մորաբանություններ: Անշուշտ, այդ բառերի մի մասը ունի և կունենա իր գործածությունը: Ինչպես՝ ազգապահ, աշխարհացիր, արմահեղեղ, գինեխենթ հավերժվել, սիրապաշտ և այլն: Սակայն 759 / մեր հաշվարկով/ մորաբանությունների մեծ մասը դիպվածային բառեր են, որոնք հեղինակի կողմից ստեղծվել են խոսքի յուրահատուկ ոճավորման միտումով: Այսպես՝ ազգագայլ, ազգախաչ, արթունահայ, գաղտնաեղեռն, գերեզմանածով, գանգալուռ, ահախոնջ, աշխարհակարկառ, դժոխախենջար, դժնաքայլ, եղեռնածայն, եղեռնաղետ, զղջախելք, ժայռաշրթունք, կարապնավանք, խաչահույս, լեզվածով, խաչանտառ, ծյունահյուսիս, մահագունվել, մանկաքամ, մարմնախրճիթ, մոխրաթախիծ, նիզակաքեն, շատրվանել, ոսոխվել և այլն:

Այսպիսով, շիրազյան մորաբանությունները աչքի են ընկնում իրենց ինքնատիպությամբ, բաղադրիչների յուրօրինակ համադրումներով: Դրանք ինքնանպատակ չեն ստեղծվել, այլ գրողի հոգնատանջ հոգու պոռթկումներն են, որոնց գործածությամբ հեղինակին հաջողվել է ընթերցողին խորհել ու գնահատել տալ Շիրազ-բանաստեղծի պոեմների լեզվական արվեստը:

Օգտագործած գրականության ցանկ

1. Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե, 1984, էջ 247:
2. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե, 1965, էջ 201:
3. Եզեկյան Լ. Կ., Գրական աշխարհաբարը և արևելահայ պատմավեպի լեզուն, Եր., 1990, էջ 269: